ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2020Թ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

Հունվար 2020թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) ղեկավար մարմինների կողմից ներկայացվող՝ 2020թ. առաջին կիսամյակի ընթացքում Կազմակերպության գործունեության վերաբերյալ սույն զեկույցում տրված են՝

- **Կազմակերպության գործունեության արդյունքները**
- **Կարևոր իրադարձությունների նկարագիրը,**
- **Կազմակերպության հետագա հնարավոր զարգացման տեսլականը**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպությունը (համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 26.10.2010թ թիվ 267Ա որոշման) գրանցված ունիվերսալ վարկային կազմակերպություն է, որը ձևավորվել է «Վաշինգթոն Քափիթալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ և «Կրեդիտ Յունիոն» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ միաձուլման արդյունքում, ինչպես նաև ընդլայնվել է «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի և «ՋԻ ԷՖ ՍԻ ՋԵՆԵՐԱԼ ԸՆԴ ՔՐԵԴԻԹ ՔՈՄՓԱՆԻ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի միացման ձևով վերակազմակերպման արդյունքում՝ մասնակիցների/բաժնետերերի համատեղ ընդհանուր ժողովի 2014թ. հունիսի 09-ի որոշմամբ (արձանագրություն թիվ 03):

Ներկայումս Ընկերությունը հանդիսանում է «Կրեդիտ Յունիոն», «Վաշինգթոն Քափիթալ» ՈՒՎԿ ՓԲ ընկերությունների և «ՋԻ ԷՖ ՍԻ ՋԵՆԵՐԱԼ ՖԱՅՆԵՆՇԼ ԸՆԴ ՔՐԵԴԻԹ ՔՈՄՓԱՆԻ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի իրավահաջորդը:

Ընկերությունը իրականացնում է «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով և Կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունները՝ ՀՀ կետրոնական բանկի թիվ 35 լիցենզիայի համապատասխան:

Ընկերության հիմնադիր կազմակերպություններից «Կրեդիտ Յունիոն» ՈՒՎԿ ՓԲԸ-ն՝ իր գործունեությունը ծավալել է հիմնականում իրավաբանական անձանց և անհատ ձեռներեցների ֆինանսավորման և սպառողական վարկավորման շուկայում, «Վաշինգթոն Քափիթալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն մասնագիտացված է եղել բացառապես ՀՀ հիփոթեքային վարկավորման շուկայում, իսկ «Ջի էֆ Սի Ջեներալ Ֆայնենշլ Ընդ Քրեդիթ Քոմփանի» ՈՒՎԿ ՍՊԸ-ի գործունեության ոլորտը եղել է բացառապես ՀՀ գյուղատնտեսական վարկավորումը:

Ընկերությունը «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով և Կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների շրջանակներում իրականացնում է ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկավորում:

Ընկերությունը, հավատարիմ մնալով իր ռազմավարությանն ու իրականացվող քաղաքականությանը, անդամակցում և համագործակցում է ՀՀ-ում գործող մի շարք միավորումների և կազմակերպությունների հետ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ ստեղծման հիմնական նպատակն ու առաքելությունը ՀՀ ֆինանսական շուկայի առաջատար դիրքերում հայտնվելն է, հանրությանը վարկային գործառնությունների իրականացման լայն հնարավորություններով ներկայանալն ու մրցակցային շուկայում լուրջ դերակատարություն ունենալն է: Այս կապակցությամբ, կազմակերպության ամբողջ ռազմավարությունը և հետագա գործունեության ամբողջ ուղղվածությունը պայմանավորված է նշված սկզբունքով:

Ընկերության գործունեության հիմնական ռազմավարությունը միտված է ակտիվ վարկային քաղաքականության վարմանը: Վերջինս իր դրսևորումներն է ստացել վարկային պրոդուկտների առավել լայն տեսականու, ինչպես նաև վարկերի տրամադրման առավել մատչելի պայմանների առաջարկմամբ, վարկերի տրամադրման ու վարկային ծառայությունների մատուցման մասնագիտական մոտեցմամբ, հաճախորդների սպասարկման որակի բարձրացմամբ և այլն:

Ընկերության առաքելության կարևոր կողմերից է նաև բնակչության առավել խոցելի և համեմատաբար ցածր եկամուտներ ունեցող անձանց՝ փոխառու միջոցների հասանելի դարձնելը, ինչպես նաև տնտեսապես ակտիվ անձանց նախաձեռնությունների համար ֆինանսավորում տրամադրելը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

Թողարկողի կանոնադրական կապիտալը կազմում է 2,000,000,000 (երկու միլիարդ) ՀՀ դրամ, որը բաժանված է 2,000,000 (երկու միլիոն) սովորական բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 1000 (հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով: Ընկերության բաժնետերերն են հանդիսանում՝

Բաժնետերեր և ներդրողներ	Մասնակցության չափը կանոնադրական կապիտալում	Բաժնետոմսերի քանակը
Էդուարդ Մուրադի Մարության	33.33%	666,628
Արայիկ Ռազմիկի Կարապետյան	28.12%	562,372
Գագիկ Նիկոլի Վարդանյան	33.53%	670.599
Կարեն Իլյիչի Դարբինյան	5.02%	100,401

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ

Խորհրդի նախագահ - Էդուարդ Մարության

Խորհրդի անդամ - Արայիկ Կարապետյան

Խորհրդի անդամ - Լուիզա Իգրարյան

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Գործադիր տնօրեն	- Լուիզա Իգրարյան	- 1997 թ-ից ֆինանսական համակարգում
Գործադիր տնօրենի տեղակալ	- Արամ Ղուկասյան	- 1999 թ-ից ֆինանսական համակարգում
Վերստուգիչ	- Օնիկ Խերանյան	- 2005 թ-ից ֆինանսական համակարգում
Գլխավոր հաշվապահ	- Սուսաննա Խաչատրյան	- 1998 թ-ից ֆինանսական համակարգում

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



2020 թվականի հունիսի 30-ի դրությամբ կազմակերպությունն ունի 77 աշխատակից:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներկա փուլում ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ-ն ֆինանսական ծառայություններ է մատուցում ՀՀ ողջ տարածքում, ինչպես նաև Արցախում:

Կարճաժամկետ ռազմավարության շրջանակներում ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ-ն նախատեսում է առավել հասանելի դառնալ հաճախորդներին՝ հեռահար ֆինանսական ծառայություններ մատուցելով հանրապետության բոլոր տարածաշրջաններում:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

Ֆինանսական ծառայություն մատուցելիս կազմակերպությունը առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

- Պրոֆեսիոնալիզմ
- Վստահություն
- Թափանցիկություն
- Ճկունություն
- Արդյունավետություն
- Նորարարություն

Workplace Professionalism™

Հաճախորդների հետ աշխատանքի սկզբունքները

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ-ն ձգտում է հաստատել երկարաժամկետ համագործակցություն յուրաքանչյուր հաճախորդի հետ: Այս նպատակով հաճախորդների հետ իր աշխատանքում ընկերությունը հավատարիմ է մնում կորպորատիվ քաղաքականության հետևյալ սկզբունքներն.

- Հուսալիություն, նվիրվածություն, հաճախորդների որակյալ սպասարկում, հաճախորդների շահերի պաշտպանություն:
- Արդյունավետ վարկավորում և SMART սկզբունքների պահպանում, ինչը ենթադրում է.
  - Հաճախորդի վարկային գերծանրաբեռնվածության կանխարգելում
  - Թափանցիկ և ադեկվատ գնագոյացում
  - Ժամկետանց գումարների հավաքագրման պատշաճ մեթոդների օգտագործում
  - Աշխատակիցների կողմից հարգալից վերաբերմունք հաճախորդների նկատմամբ
  - Հաճախորդների բողոքների քննարկման և լուծման մեխանիզմների առկայություն
  - Հաճախորդի և նրա վարկի վերաբերյալ տեղեկատվության գաղտնիության պահպանում:

the smart campaign

- Համապատասխանություն օրենքներին, էթիկայի նորմերի և արդար համագործակցության կանոնների պահպանում, իրենց սեփական պարտավորությունների ժամանակին կատարում և դրական հեղինակության ձեւավորում:
- Քաղաքական դաշտում չեզոքության պահպանում, անկախություն որևէ կուսակցությունից կամ խմբավորումից:
- Գործունեության իրականացում ի շահ հաճախորդների և բաժնետերերի:

ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

Ընկերությունը ռազմավարական ծրագրերի և նպատակների իրականացման հիմնական գործոն է համարում մարդկային ռեսուրսների զարգացումը: Այդ պատճառով աշխատակիցների հետ հարաբերություններում ընկերության ղեկավարությունը առաջնորդվում է հետեւյալ սկզբունքներով.

- Բոլոր աշխատակիցների աշխատանքային պարտականությունների հստակ սահմանազատում:
- Աշխատակիցների համար ստացված գիտելիքների, ինչպես նաև ինքնադրսևորման համար պայմանների ստեղծում:
- Պարբերական դասընթացների միջոցով մասնագիտական գիտելիքները շարունակաբար բարելավելու հնարավորության ստեղծում:
- Լավագույն արդյունքների ստացման նպատակով աշխատակիցների խրախուսման համակարգի կիրառում, որով արդյունավետորեն կգնահատվի Կազմակերպության առաջադրած խնդիրներին հասնելու աշխատակիցների ջանքերը:

Քաջ գիտակցելով, որ բարձր որակավորում ունեցող մասնագետները հանդիսանում եմ ընկերության հաջողության գրավականը՝ Կազմակերպությունում մեծ ուշադրություն է դարձվում աշխատակիցների պարբերական վերապատրաստմանը և ատեստավորմանը: Հատկանշական է, որ աշխատակիցները մասնակցում են ինչպես ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ կողմից, այնպես էլ այլ մասնագիտացված ուսումնական հաստատությունների կողմից կազմակերպվող մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

Հիփոթեքային վարկավորման շուկայում Ընկերությունը հանդիսանում է

KFW բանկային խմբի "Գերմանահայկական հիմնադրամ ծրագրի կառավարման գրասենյակի" կողմից ՀՀ-ում իրականացվող "Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում" վարկային ծրագրի մասնակից՝ սկսած 2007թ-ից:

"Հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման" պետական նպատակային ծրագրի մասնակից, որը իրականացվում է "Ազգային հիփոթեքային ընկերություն" վերաֆինանսավորող վարկային կազմակերպության հետ մեկտեղ՝ սկսած 2009թ-ից:

"Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան" պետական նպատակային ծրագրի մասնակից, որը իրականացվում է "Բնակարան երիտասարդներին" վերաֆինանսավորող վարկային կազմակերպության հետ՝ սկսած 2010թ-ից:

Ընկերությունը հանդիսանում է նաև

"Վարկային կազմակերպությունների միության" անդամ՝ սկսած 2010թ-ից, ընդ որում "Ջի-Էֆ-Սի Ջեներալ Ֆայնենշլ ընդ Քրեդիթ Քոմփանի" ՈՒՎԿ ՍՊԸ-ն, որի իրավահաջորդն է ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ-ն, հանդիսանում էր ՎԿՄ հիմնադիր-անդամ 2008 թ-ից:

"Ինգո Արմենիա" ԱՓԲԸ ապահովվագրական գործակալ՝ սկսած 2010թ-ից:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ-ն, հանդիսանալով Ջի-Էֆ-Սի ՈՒՎԿ ՍՊԸ իրավահաջորդը, մասնակցել է «Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամ» – Հայաստանի՝ Ջրից դեպի Շուկա (ՋԴՇ) բաղադրիչի շրջանակներում իրականացվող գյուղատնտեսության ֆինանսավորման ծրագրերին, տրամադրելով երկարաժամկետ վարկեր ազգային արժույթով: Ընկերությունը հաջողությամբ մասնակցել է վարկային ծրագրի առաջին և երկրորդ փուլերին, ստացել է պատվոգիր է ՀՄՀ-Հայաստանի կողմից: Հանդիսանալով ակտիվ և հուսալի գործընկեր՝ Ընկերությունը ստացել է շնորհակալագիր «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամից» ՋԴՇ վարկավորման ծրագրի իրականացման մեջ անգնահատելի ներդրում կատարելու համար:

CERTIFICATE OF APPRECIATION

is awarded to

"GFC General Financial and Credit Company" UCO CJSC

for its invaluable contribution to the implementation of the MCA-Armenia Credit Program.

Alex Russin

Resident Country Director

Millennium Challenge Corporation

ՊԱՏՎՈԳԻՐ

շնորհվում է

«ՋԻ Է Ֆ ՍԻ Ֆինանսական Ընդհանուր Վարկային Ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ-ին

ՀՄՀ-Հայաստան ծրագրի վարկային բաղադրիչի իրականացման գործում մեծ ներդրում ունենալու համար:

Ալեքս Հուսենքոն

Գլխավոր գործադիր տնօրեն

Հաստատված միջազգային շտաբարան - Հայաստան, Պլանկ

Գյուղական Ֆինանսավորման Կառույց - ծրագրերի իրականացման գրասենյակ»-ի կողմից իրականացվում է փոքր և միջին գյուղական բիզնեսի զարգացմանը ուղղված փոխառության Համաձայնագրերի կնքումը տարբեր ունիվերսալ վարկային կազմակերպությունների հետ, որոնց շարքում ծրագրին 2014 թ. նոյեմբեր ամսից իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերում ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ-ն:

Այս համագործակցության նպատակն է գյուղատնտեսական գործունեության ակտիվացմանը աջակցելը, գյուղական տարածքներում փոքր և միջին արտադրողների ու ձեռնարկատերերի համար ֆինանսական միջոցները առավել մատչելի և հասանելի դարձնելը: ԳՖԿ-ԾԻԳ-ի գործառույթներն իրականացվում են ԳՋՄՀ-IFAD շրջանակներում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

2016թ. օգոստոսի 1-ին «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամի և ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ-ի միջև կնքվել է համագործակցության պայմանագիր՝ համաձայն որի «Վերականգնվող էներգիայի ֆինանսավորում» ծրագրի շրջանակներում Կազմակերպությանը տրամադրվել է 50 մլն ՀՀ դրամ գումարի փոխառություն՝ ենթավարկերի տրման նպատակով:

2017թ. օգոստոսի 1-ին Frontera Capital Group Limited կազմակերպության և ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ-ի միջև 1 մլն ԱՄՆ դոլարի փոխառության պայմանագիր է կնքվել՝ համաձայն որի ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից ներգրավվել է 478,477,257.00 ՀՀ դրամ փոխառություն՝ ենթավարկերի տրամադրման նպատակով:

Հայաստանի չգազաֆիկացված համայնքների իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց գործունեության էներգաարդյունավետության բարձրացման ծրագրի շրջանակներում ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ-ի և Հայաստանի վերականգնվող էներգիայի և էներգախնայողության հիմնադրամի միջև 2017թ. օգոստոսի 31-ին կնքվեց 1 միլիարդ ՀՀ դրամի նպատակային փոխառության պայմանագիր, Կազմակերպության կողմից տրամադրվող վարկերի վերաֆինանսավորման նպատակով:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

Ընկերության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ընկերության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների ընդունելի հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության ֆինանսական վիճակի վրա ռիսկերի անցանկալի ազդեցությունները:

Ընկերությունը կարևորում է հետևյալ ռիսկերը.

- Վարկային ռիսկ,
- Իրացվելիության ռիսկ,
- Տոկոսադրույքի ռիսկ,
- Գործառնական ռիսկ:

Ռիսկերի պատշաճ մակարդակով կառավարման համար պատասխանատու է Ընկերության Ղեկավարությունը և Ռիսկերի կառավարման խումբը: Իրացվելիության և տոկոսադրույքի ռիսկերի կառավարումն իրականացնում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեն (ԱՊԿԿ):

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ

Ընկերության գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորությունը չկատարելու/ոչ պատշաճ կատարելու հետ, որը Ընկերությանը կորուստներ կարող է պատճառել: Վարկային ռիսկը Ընկերության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկվում:

Վարկային ռիսկի ամենօրյա կառավարումը իրականացվում է Ռիսկերի կառավարման խմբի և Ընկերության վարկավորման բաժինների կողմից: Վարկային ռիսկի կառավարումը իրականացվում է վարկառուների գործունեության ընթացիկ մոնիտորինգի և պարբերաբար իրականացվող վերլուծությունների միջոցով: Հսկողության ընթացքում բացահայտվող վարկառուների ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում Կազմակերպությունը իրավունք ունի դադարեցնել համագործակցությունը, ինչպես նաև պահանջել վարկերի վաղաժամկետ մարում:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

Իրացվելիության ռիսկը ստանձնած պարտավորությունների չկատարելու հավանականությունն է, ինչի առաջացման պատճառ կարող է հանդիսանալ Կազմակերպության դրամական հոսքերի ժամկետային անհամապատասխանությունը և/կամ բավարար ծավալով իրացվելի ակտիվների բացակայությունը: Ընկերությունը իրացվելիության ռիսկը կառավարում է դրամական հոսքերի կառավարման և բարձր իրացվելի ակտիվներում ներդրումներ կատարելու միջոցով: Մասնավորապես, յուրաքանչյուր պահին Ընկերության բարձր իրացվելի ակտիվների և մինչև առաջիկա սահմանված վճարման ամսաթիվը դրամական հոսքերի հանրագումարը պետք է առնվազն բավարարի այդ վճարումը կատարելու համար:

Եթե Ընկերության բարձր իրացվելի ակտիվները և ակնկալվող ներհոսքը բավարար չեն հերթական վճարումը կատարելու և, միևնույն ժամանակ, վարկավորումը շարունակելու համար, Ընկերությունը կարող է ժամանակավորապես դադարեցնել վարկավորումը (նվազեցնել ծավալները) և կուտակել դրամական ներհոսքը հերթական վճարումը կատարելու նպատակով (ձևավորել մարման ֆոնդ): Իրացվելիության ռիսկի կառավարումը իրականացնում է ԱՊԿԿ-ն:

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՌԻՍԿ

Տոկոսադրույքի ռիսկը հանդիսանում է շուկայական ռիսկի տարատեսակ և իրենից ներկայացնում է տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով առաջացող վնասների չափը: Տոկոսադրույքի ռիսկի կառավարումը իրականացնում է ԱՊԿԿ-ն: Տոկոսադրույքի ռիսկի կառավարման նպատակով Ընկերությունը ձգտում է համապատասխանեցնել իր տեղաբաշխված և ներգրավված միջոցների մարումների ժամկետները, ինչպես նաև ժամանակ առ ժամանակ վերանայել իր կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքները: Ռիսկի նվազեցման նպատակով սահմանափակվում են տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվներում ներդրումների չափերը:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿ

Գործառնական ռիսկը պայմանավորված է Ընկերության անձնակազմի ոչ համարժեք հմտության կամ սխալ գործողություններով, ընթացիկ աշխատանքի կազմակերպման և կատարման թերություններով, սարքավորումների տեխնիկական անսարքությամբ, կազմակերպության գործունեության ծավալներին և ուղղվածությանը տեխնիկական ապահովվության անհամապատասխանությամբ, ընթացակարգերի անկատարությամբ, ինչպես նաև արտաքին ծառայությունների թերացումներով: Մեծ վնասներ կարող են առաջանալ երրորդ անձանց կողմից իրականացվող խարդախ քայլերի հետևանքով:

Գործառնական ռիսկը նվազագույնի հասցնելու նպատակով Ընկերության գրեթե բոլոր բիզնես գործընթացները փաստաթղթավորված են, առկա է ներքին իրավական ակտերի բազա, ներդրված է սահմանաչափերի համակարգ, կիրառվում են կրկնակի ստուգման/հաստատման սկզբունքները, սահմանված են հաշվետվությունների տեսակները և տրամադրման պարբերականությունները, Կազմակերպության գործընթացները ունեն ավտոմատացման բարձր մակարդակ: Խարդախությունները կանխելու նպատակով իրականացվում են անվտանգության միջոցառումներ:

ՆԵՐՔԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներքին հաշվետվողականությունը հանդիսանում է ռիսկերի կառավարման կարևորագույն բաղադրիչը: Ընկերությունում ներկայումս գործարկվում են ներքին հաշվետվություններ, որոնք սահմանված ժամկետներում պատրաստվում և տրամադրվում են Ընկերության Խորհրդին, ղեկավարությանը և մասնագիտացված կոմիտեներին, և որոնց հիման վրա կայացվում են ռիսկերի կառավարման վերաբերյալ որոշումները: Ընկերությունը մշտապես միջոցառումներ է ձեռնարկում կատարելագործելու և ավտոմատացնելու ներքին հաշվետվողականությունը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

Ուժեղ կողմեր

- Ընդլայնվող և լավ դիվերսիֆիկացված վարկային պորտֆել
- Վարկային գործիքների մշակում՝ հաշվի առնելով հաճախորդների պահանջները (ինչի շնորհիվ դրանք ունեն բարձր պահանջարկ)
- Վարկային գործընթացի և վարկերի տրամադրման արագություն
- Ղեկավարության և աշխատակազմի բարձր որակավորում
- Ֆինանսապես գրագետ և պրոֆեսիոնալ ROA=1.0%, ROE= 12.4%
- Անդամակցությունը Վարկային կազմակերպությունների միությանը
- Կենտրոնական բանկի վերահսկողության ներքո
- Համագործակցություն վճարային համակարգերի հետ՝ Իդրամ, Մոբիդրամ, Իզի Փեյ ՍՊԸ, Թել-Սել ՓԲԸ, ՅՈՒՓԵՅ ՓԲԸ

Թույլ կողմեր

- Մասնաճյուղային ցանցի բացակայություն

Հնարավորություններ

- Ֆինանսական լիզինգի կիրառման հնարավորություն (գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների մասով)
- Նոր տարածաշրջաններ մուտք գործելու հնարավորություն

Սպառնալիքներ

- Աճող մրցակցությունը, մրցակից ֆինանսական կառույցների չափազանց ռիսկային վարկավորման քաղաքականությունը (առանց վարկի խորը վերլուծության և ապահովության)
- Միջնորդ կազմակերպությունների և երրորդ անձանց խարդախ գործողություններ
- Հաճախորդների վարկային բեռի աճը, բնակչության ցածր եկամուտները
- Հատկապես գյուղական վայրերից հնարավոր հաճախորդների ժամանակավոր կամ մշտական արտագաղթը

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ 2019թ. և 2020թ. առաջին կիսամյակների ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ (հազ. ՀՀ դրամ)

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

FINANCIAL INFORMATION

Հիմնական ֆինանսական ցուցանիշներ	2020թ. I կիսամյակ	2019թ. I կիսամյակ	Փոփոխություն (%)
Ակտիվներ	38,991,041	28,441,343	37%
Վարկային պորտֆել	20,712,021	19,344,257	7%
Պարտավորություններ	35,165,346	26,264,883	34%
Փոխառություններ	16,957,218	17,164,968	-1%
Սեփական կապիտալ	3,825,695	2,176,460	76%
Եկամուտ	4,388,967	3,687,260	19%
Տոկոսային եկամուտ	2,846,040	2,461,391	16%
Ոչ տոկոսային եկամուտ	1,542,927	1,225,869	26%
Ծախսեր	4,077,318	3,383,168	21%
Տոկոսային ծախսեր	1,243,141	966,536	29%
Ոչ տոկոսային ծախսեր	2,834,177	2,416,632	17%
Զուտ շահույթ հարկումից հետո	311,649	234,553	33%
Ընդամենը համապարփակ եկամուտ	311,649	234,553	33%

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

- **Կապիտալի հարաբերակցություն (ԿՀ) -**

$$\text{ԿՀ} = \frac{\text{Սեփական կապիտալ}}{\text{Ընդամենը ակտիվներ}}$$

Ցույց է տալիս սեփական կապիտալի մասնաբաժինը ընկերության ակտիվներում:

- **Կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցություն (ՍԿ/ՎՊ) -**

$$\text{ՍԿ/ՎՊ} = \frac{\text{Սեփական կապիտալ}}{\text{Վարկային պորտֆել}}$$

Ցույց է տալիս սեփական կապիտալի մասնաբաժինը վարկային պորտֆելում:

- **Շահույթի մարժա (ՇՄ)**

$$\text{ՇՄ} = \frac{\text{Զուտ շահույթ հարկումից հետո}}{\text{Ընդամենը եկամուտ}}$$

Չափում է եկամտի յուրաքանչյուր դրամից ընկերության կողմից ստացվելիք շահույթը:

- **Վարկային պորտֆելի միջին տոկոսադրույքը (Տ)**

$$\text{Տ} = \frac{\text{Տոկոսային եկամուտ}}{\text{Վարկային պորտֆել}}$$

Չափում է վարկային պորտֆելի գեներացրած տոկոսային եկամտի մասնաբաժինը:

- **Ծախսերի հարաբերակցություն (ԳԾՀ)**

$$\text{ԳԾՀ} = \frac{\text{Ընդամենը ծախսեր}}{\text{Ընդամենը եկամուտ}}$$

Ցույց է տալիս միավոր եկամտի հաշվով ծախսերի ծավալը:

- **Կապիտալի միջին եկամտաբերություն (ԿՄԵ)**

$$\text{ԿՄԵ} = \frac{\text{Զուտ շահույթ հարկումից հետո}}{\text{Սեփական կապիտալ}}$$

Ցույց է տալիս բաժնետերերի կողմից ներդրված գումարի շնորհիվ գեներացված շահույթը:

- **Ակտիվների միջին եկամտաբերություն (ԱՄԵ)**

$$\text{ԱՄԵ} = \frac{\text{Զուտ շահույթ հարկումից հետո}}{\text{Ընդամենը ակտիվներ}}$$

Ցույց է տալիս ընկերության ակտիվների գեներացված շահույթը:

- **Պ/Կ հարաբերակցություն (Պ/Կ)**

$$\text{Պ/Կ} = \frac{\text{Ընդամենը պարտավորություններ}}{\text{Սեփական կապիտալ}}$$

Ցույց է տալիս, թե ընկերությունն ինչ համամասնությամբ է օգտագործում պարտավորությունները և կապիտալը՝ իր ակտիվները ֆինանսավորելու նպատակով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2020թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ (%)



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ԸՍՏ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ)

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԸ, ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԸ, ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ (ՀԱԶ. ՀՀ ԴՐԱՄ) 2020 և 2019 ԹԹ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ



- Ակտիվների աճ – 37%
- Վարկային պորտֆելի աճ – 7 %
- Պարտավորությունների աճ - 34%
- Սեփական կապիտալի աճ – 76 %

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ՇԱՀՈՒՅԹԸ (ՀԱԶ. ՀՀ ԴՐԱՄ) 2020 և 2019 ԹԹ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ



- Համախառն եկամտի աճ – 19%
- Տոկոսային եկամտի աճ – 16 %
- Զուտ շահութի նվազում – 33%

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

ԳՈՐԾՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԸ 30.06.2020թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ (ըստ վարկատեսակների)

Քանակ (33,961 հատ)



Ծավալ (20,351,435 հազ. ՀՀ դրամ)



ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

ԳՈՐԾՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՔԱՆԱԿԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2020թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ԸՍՏ ԼՈԿԱԼ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ)

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2020թ.առաջին կիսամյակի ընթացքում (հազ.դրամ)



ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ԸՍՏ ԼՈԿԱԼ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ)

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

ԱԿՏԻՎՆԵՐԸ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԸ 2020թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ (հազ. ՀՀ դրամ)



ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 2020թ. համար (հազ.դրամ)

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

	2020-1	2020-2	2020-3	2020-4
Սպառողական վարկեր	9,993,920	9,498,939	14,151,325	16,010,915
Հիփոթեքային վարկեր	7,259,888	7,371,854	8,426,685	8,999,054
Գյուղատնտեսական վարկեր	1,753,099	1,725,712	1,778,209	1,863,493
Փոքր/Միջին բիզնես վարկեր	2,087,846	1,754,930	2,076,870	2,491,916
Վարկային պորտֆել	**21,094,753**	**20,351,435**	**26,433,089**	**29,365,378**



ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության առաջիկա տարիների հեռանկարային նպատակը ֆինանսական տեխնոլոգիաների ոլորտում գերակա դիրք գրավելն է, այլ կերպ ասած՝ նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման միջոցով ընդլայնել և հնարավորինս կատարելագործել առցանց վարկավորումը:

«Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն ակտիվորեն շարունակում է իր վարկային գործիքների թվայնացման գործընթացը, որի վերջնական նպատակն է իր հաճախորդներին բարձրորակ ֆինանսական ծառայությունների մատուցումը և ֆինանսական միջոցների հասանելիության ապահովումը:

Կազմակերպությունը նախատեսում է ակտիվորեն իրականացնել միջոցառումներ՝ աճեցնելու վարկային պորտֆելը՝ պահպանելով վերջինիս որակը, բարելավելու վարկային գործիքները, շարունակելու որակյալ ֆինանսական ծառայությունների տրամադրումը և, որպես արդյունք, մեծացնելու գործող հաճախորդների քանակը:

Միաժամանակ, Ընկերությունը շարունակելու է աշխատանքն ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային ֆինանսական հաստատությունների հետ, որոնց հետ համագործակցության արդյունքում ներգրավված դրամական փոխառու միջոցներն ուղղվում են երկրի տնտեսության զարգացման համար առավել կարևոր ճյուղեր, ինչպես նաև ստեղծում են հնարավորություններ ցածր եկամուտ ունեցող, սակայն գործարար և ակտիվ բնակչության գործունեության համար, ինչը նպաստում է վերջիններիս կենսամակարդակի բարելավմանը:

ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

- **2016թ. սեպտեմբերի 8-ին** կայացած Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ՝ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման միջոցով, 500,000,000 ՀՀ դրամով համալրվել է Ընկերության կանոնադրական կապիտալը: ՀՀ Կենտրոնական Բանկը 22.09.2016թ. գրանցել է «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի Կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն որի Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1,500,000,000 ՀՀ դրամ, ինչպես նաև **2019թ. հուլիսի 18-ի** Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ և ՀՀ Կենտրոնական Բանկի **2019թ. հուլիսիս 31-ի** գրանցմամբ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման միջոցով համալրվել է Ընկերության կանոնադրական կապիտալը՝ կազմելով 2,000,000,000 ՀՀ դրամ:

- **2016թ. նոյեմբերի 1-ին** «Գլոբալ Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպության և «Իդրամ» ընկերության միջև կնքվել է համագործակցության պայմանագիր, համաձայն որի ԻԴՐԱՄ հաշիվը հնարավոր է դարձել համալրել «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ-ից ստացած վարկի միջոցով:

- «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն՝ «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ ներդրումային ընկերության հետ համագործակցության շրջանակում **2017թ. մարտին** իրականացել է ինովացիոն startup-ների ֆինանսավորման ծրագիր, որի նպատակն է մատչելի վարկավորման և վենչուրային կապիտալ ներդրումների իրականացման միջոցով աջակցել տեխնոլոգիական և այլ ոլորտներում նորարարական գաղափարներ ունեցող թիմերին/ընկերություններին կյանքի կոչելու այդ գաղափարները՝ դարձնելով դրանք եկամտաբեր բիզնես:

- **2016թ**. ընթացքում «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն մի շարք համագործակցության պայմանագրեր է կնքել՝ մասնավորապես, «Մոբի դրամ» ՓԲԸ-ի, «Իզի Փեյ» ՍՊԸ-ի և «Իդրամ» ՍՊԸ-ի հետ, համաձայն որոնց կազմակերպության հաճախորդներն ամսական վճարումները կարող են կատարել վերոնշյալ վճարային համակարգերի միջոցով:

- Սկսվել է նոր համագործակցություն 4car.am ՍՊԸ-ի հետ, համաձայն որի այսուհետ www.4car.am կայքի միջոցով Կազմակերպության պոտենցիալ հաճախորդները հնարավորություն ունեցան դիմել ավտոմեքենայի գրավադրմամբ վարկի համար:

ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

- «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերությունը ֆիզիկական անձանցից, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերից և իրավաբանական անձանցից փոխառություն ներգրավելու նպատակով 2015 թվականից իրականացնում է պարտատոմսերի թողարկում և դրանց հրապարակային տեղաբաշխում:

- **2017թ. նոյեմբերի 2-ին** «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի և «Վարկային Պորտֆելի Արժեթղթավորման Հիմնադրամ 1»-ի միջև կնքվեց ակտիվների վաճառքի պայմանագիր՝ համաձայն որի «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն «Վարկային Պորտֆելի Արժեթղթավորման Հիմնադրամ 1»-ից գնել է փոխանցման օրվա դրությամբ Ակտիվների (Վարկերի) նկատմամբ և դրանցից բխող բոլոր իրավունքները:

- **2018թ. նոյեմբերին** իրականացվեց 2016 թ. նոյեմբերի 24-ին և 2017 թ. նոյեմբերի 23-ին «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ի առաջնային տեղաբաշխման հարթակում՝ ստանդարտ փակ (եվրոպական) մեկանգամյա աճուրդի անցկացման միջոցով AMGLBLB24ER9 և AMGLBLB16ER5 տարբերակիչ ծածկագրերով տեղաբաշխած 20,000 և 30,000 հատ 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով (մեկ արժեթղթի համար) պարտատոմսերի մարումը, ինչպես նաև 2019թ. նոյեմբերի 25-ին իրականացվել է 2016թ. նոյեմբերի 24-ին «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից տեղաբաշխված AMGLBLB23ER1 տարբերակիչ ծածկագրերով տեղաբաշխած 10,000 հատ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով (մեկ արժեթղթի համար) պարտատոմսերի մարումը:

- **2017թ. նոյեմբերի 23-ին** «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ի առաջնային տեղաբաշխման հարթակում տեղի է ունեցել «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկված արժեկտրոնային պարտատոմսերի երրորդ տեղաբաշխումը՝ ստանդարտ փակ (եվրոպական) մեկանգամյա աճուրդի միջոցով հետևյալ պայմաններով.

AMGLBLB25ER6 տարբերակիչ ծածկագրով դոլարային պարտատոմսերի համար ներկայացված գնման հայտերի ընդհանուր ծավալը կամ ընդհանուր պահանջարկը կազմել է 1,456,410.65 ԱՄՆ դոլար: Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են, որի արդյունքում Ընկերությունը ներգրավել է 1,000,410.65 ԱՄՆ դոլար: Տեղաբաշխված արժեթղթերի կտրման գինը եղել է 100 ԱՄՆ դոլար, կտրման եկամտաբերությունը՝ 7%, իսկ միջին կշռված եկամտաբերությունը՝ 6.9846%:

ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

- **2018թ. նոյեմբերի 27-ին** «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ի առաջնային տեղաբաշխման հարթակում տեղի է ունեցել «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխումը՝ ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի միջոցով, որպես տեղաբաշխող հանդես է գալիս «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ն: Տեղաբաշխումն իրականացվել է հետևյալ պայմաններով.

AMGLBLB27ER2 տարբերակիչ ծածկագրով մինչև 27.11.2021թ. մարման ժամկետով 500,000,000 ՀՀ դրամ թողարկման ծավալով դրամային պարտատոմսերի համար ներկայացված գնման հայտերի ընդհանուր ծավալը կազմել է 995,068,340 ՀՀ դրամ:Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են, ինչի արդյունքում Ընկերությունը ներգրավել է 500,068,340 ՀՀ դրամ: Տեղաբաշխված արժեթղթերի կտրման գինը եղել է 10,000 ՀՀ դրամ, կտրման եկամտաբերությունը՝ 10%, իսկ միջին կշռված եկամտաբերությունը՝ 9.9947%:

- **2019թ. նոյեմբերի 28-ին** «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի առաջնային տեղաբաշխման հարթակում տեղի է ունեցել «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկված արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխումը՝ ստանդարտ փակ (եվրոպական) մեկանգամյա աճուրդի միջոցով.

a. Առաջին տրանշ՝ AMGLBLB28ER0 տարբերակիչ ծածկագրով դոլարային պարտատոմսերի համար ներկայացված գնման հայտերի ընդհանուր ծավալը կամ ընդհանուր պահանջարկը կազմել է 1,772,798.9 ԱՄՆ դոլար: Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են, որի արդյունքում Ընկերությունը ներգրավել է 1,000,032.2 ԱՄՆ դոլար: Տեղաբաշխված արժեթղթերի կտրման գինը եղել է 100 ԱՄՆ դոլար, կտրման եկամտաբերությունը՝ 6.5%, իսկ միջին կշռված եկամտաբերությունը՝ 6.4983%:

b. Երկրորդ տրանշ՝ AMGLBLB19ER9 տարբերակիչ ծածկագրով դրամային պարտատոմսերի համար ներկայացված գնման հայտերի ընդհանուր ծավալը կամ ընդհանուր պահանջարկը կազմել է 677,125,000.00 ՀՀ դրամ: Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են, ինչի արդյունքում Ընկերությունը ներգրավել է 500,046,850.00 ՀՀ դրամ: Տեղաբաշխված արժեթղթերի կտրման գինը եղել է 10,000 ՀՀ դրամ, կտրման եկամտաբերությունը՝ 9%, իսկ միջին կշռված եկամտաբերությունը՝ 8.99%:

ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ

- 2019թ. ապրիլի 10-ին «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ 2019թ. ապրիլի 12-ին (առաջին փուլ) և 2019թ. հուլիսի 16-ին (երկրորդ փուլ) «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի չորս բաժնետերերին համամասնորեն ըստ իրենց բաժնեմասերի վճարվել է 2018թ. տարեկան արդյունքներով հաստատված շահաբաժինները:

- 2019թ. «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն նշեց իր գործունեության տասը տարին, որոնց ընթացքում ընկերությունը դարձել է Հայաստանում առաջատար վարկային կազմակերպություններից մեկը ինչպես ակտիվների մեծությամբ, այնպես էլ ծառայությունների բազմազանությամբ: Չունենալով մասնաճյուղային ցանց՝ ընկերությունը ապահովել է հասանելիություն Հայաստանի ամբողջ տարածքում և տրամադրել է շուրջ 100,000 հատ վարկ 100 մլրդ ՀՀ դրամ ծավալով:

- Լինելով առցանց ուղղվածություն ունեցող վարկային կազմակերպություն՝ Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ ՓԲԸ-ն 2019թ-ին ներդրեց առցանց վարկավորման իր նոր հարթակը՝ CashMe-ն, որի միջոցով վարկավորման ծառայությունները մատուցվում են 24/7 ռեժիմով, և հասանելի է ամբողջ աշխարհում: